Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հունիսի 17-ի N 843 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՕԴԱՆԱՎԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶԵՆՔԻ ԵՎ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոններով սահմանվում են քաղաքացիական ավիացիայի օդանավերով (այսուհետ՝ օդանավ) ուղևորների կողմից զենքի և փամփուշտների (այսուհետ՝ զենք) փոխադրման ընթացակարգերը։

2. Ուղևորն օդանավով զենք փոխադրելու համար պետք է ունենա «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված զենք ներկրելու կամ զենք արտահանելու թույլտվություն՝ տրված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից։ Ուղևորի կողմից զենքը կարող է օդանավով փոխադրվել այն՝ փոխադրման համար օդանավի անձնակազմին պահպանության կամ որպես ուղեբեռ հանձնելու միջոցով կամ օդանավի ուղևորային սրահում։

3. Օդանավով փոխադրման համար պահպանության հանձնված զենքն ընդունվում, համապատասխան փաստաթղթերը ձևակերպվում, մեկնման օդանավակայանում օդանավ տեղափոխվում ու ժամանման օդանավակայանում ուղևորին են վերադարձվում օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայության լիազորված աշխատողների կողմից։ Այն օդանավակայաններում, աերոդրոմներում և ուղղաթիռների թռիչքադաշտերում, որտեղ չկան ավիացիոն անվտանգության ծառայություններ, փոխադրման համար պահպանության փոխանցված զենքի ընդունման, համապատասխան փաստաթղթերի ձևակերպման, օդանավ տեղափոխման և ժամանման օդանավակայանում

ուղևորներին վերադարձման աշխատանքներն իրականացնում է օդանավի հրամանատարի կողմից զենքի ընդունման համար պատասխանատու նշանակված օդանավի անձնակազմի անդամը։

4. Թռիչքի ընթացքում պահպանության հանձնված զենքի համար օդանավի բեռնախցիկի առանձնացված հատվածում պետք է տեղադրվի փականով փակվող՝ մետաղյա չհրկիզվող արկղ կամ պահարան։

II. ՕԴԱՆԱՎՈՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԶԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

5. Օդանավի անձնակազմին պահպանության հանձնվում է միայն կարճ ակոսափող հրազենը։

6. Ուղևորի կողմից զենքն օդանավով փոխադրելու համար պահպանության հանձնվելու դեպքում օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայության զննման գործառույթներ իրականացնող խմբի ավագը (այսուհետ՝ խմբի ավագ) ստուգում է զենքի մաքսային ձևակերպման փաստը և դրա առկայության դեպքում ուղևորին՝ ներկայացված զենքի հետ միասին ուղեկցում օդանավակայանի ոստիկանության գծային բաժին։ Ոստիկանության գծային բաժնի համապատասխան աշխատողի կողմից ստուգվում է զենքը՝ այդ նպատակով հատկացված առանձնացված սենյակում, որի մասին գրանցում է կատարվում օդանավով փոխադրման ընդունված զենքի արձանագրության մեջ՝ համաձայն N 1 ձևի։

7. Խմբի ավագը պահպանության հանձնված զենքի մասին ծառայողական կապի միջոցներով տեղեկացնում է օդանավ շահագործողի օդանավակայանային ներկայացուցչին, իսկ նրա բացակայության դեպքում՝ օդանավակայանի կենտրոնական կարգավարական ծառայությանը՝ օդանավի անձնակազմին տեղեկացնելու համար։

8. Պահպանության հանձնված զենքի մասին կազմվում է արձանագրություն (N 1 ձև) չորս օրինակից, որն ստորագրում են խմբի ավագը, սույն կանոնների 6-րդ կետում նշված ոստիկանության աշխատողը, ուղևորը և օդանավի հրամանատարի կողմից զենքի ընդունման համար պատասխանատու նշանակված օդանավի անձնակազմի անդամը։

9. Արձանագրության կազմման ընթացքում խմբի ավագն ուղևորին ծանոթացնում է ժամանման օդանավակայանում զենքն ստանալու կարգին։

10. Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է խմբի ավագին և պահվում օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայությունում, իսկ մեկ օրինակը հանձնվում է ոստիկանության գծային բաժին։

11. Արձանագրության երկու օրինակները, որպես ուղեկցող փաստաթուղթ, փոխանցվում են օդանավի անձնակազմին։ Մեկ օրինակը մնում է օդանավի անձնակազմի մոտ և կցվում չվերթի թռիչքային փաստաթղթերին։ Ժամանման օդանավակայանում օդանավակայանի լիազորված անձն ստորագրում է արձանագրության օրինակները և զենքի ընդունման համար պատասխանատու նշանակված օդանավի անձնակազմի անդամից ստանում փոխադրման ընդունված զենքը։

12. Ժամանման օդանավակայանում ուղևորին տրվում է արձանագրության օրինակը, որը հիմք է ուղևորի կողմից զենքն ստանալու համար։

13. Ուղևորի կողմից պահպանության հանձնված զենքը խմբի ավագի կողմից փաթեթավորվում է փամփշտակալից առանձին։ Փափշտակալից առանձնացվում են նաև փամփուշտները և փաթեթավորվում առանձին։ Փաթեթները դրվում են արկղի կամ պարկի մեջ։ Փաթեթների վրա նշվում են երթուղին, չվերթի և արձանագրության համարները, զենքը փոխադրող անձի անունն ու ազգանունը։

14. Խմբի ավագը փոխադրման ընդունված զենքը տեղափոխում է օդանավ և հանձնում զենքի ընդունման համար պատասխանատու նշանակված օդանավի անձնակազմի անդամին, ով այն տեղադրում է օդանավի բեռնային խցիկի համապատասխան

արկղում, կնիքով կնքում է արկղը և համապատասխան նշում կատարում արձանագրության օրինակներում։

15. Թռիչքի ընթացքում օդանավի բեռնային խցիկում գտնվող արկղի բանալին պահվում է զենքի ընդունման համար պատասխանատու նշանակված օդանավի անձնակազմի անդամի մոտ։

16. Վայրէջքի միջանկյալ կետերում փոխադրման համար զենք ընդունելու դեպքում զենքի արկղը կամ պարկը զենքի ընդունման համար պատասխանատու նշանակված օդանավի անձնակազմի անդամի կողմից տեղադրվում է օդանավի բեռնային խցիկի համապատասխան արկղում և կնքում կնիքով։

17. Զենքի արկղը կամ պահարանը կնքելու համար նախատեսված կնիքն ամրագրվում է օդանավին և ստորագրությամբ փոխանցվում օդանավն ընդունող թռիչքային անձնակազմին։

18. Օտարերկրյա օդանավակայանից թռիչք կատարելիս՝ պահպանության համար հանձնված զենքն ընդունվում է օդանավ՝ սույն կանոնների և «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Չիկագոյի կոնվենցիայի N 17 «Անվտանգություն» հավելվածի պահանջներին համապատասխան, օդանավ շահագործողի օդանավակայանային ներկայացուցչի հսկողությամբ և օդանավակայանի գործադիր մարմնի համաձայնությամբ։

19. Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից օտարերկրյա օդանավի թռիչքի դեպքում զենքն օդանավ հանձնվում է օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայության կողմից, սույն կանոններով սահմանված կարգով՝ օտարերկրյա ավիաընկերության ներկայացուցչի համաձայնությամբ և հսկողությամբ։

III. ԺԱՄԱՆՄԱՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԶԵՆՔՆ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻՆ ՏԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

20. Օդանավի հրամանատարը վայրէջքից 20 րոպե առաջ օդանավակայանի կենտրոնական կարգավարական ծառայությանը տեղեկացնում է օդանավում զենքի առկայության մասին։

21. Օդանավակայանի կենտրոնական կարգավարական ծառայությունը ժամանման օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայությանը հաղորդում է օդանավում զենքի առկայության մասին։

22. Օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայության հերթափոխի պետը դիմավորում է օդանավը, զենքի ընդունման համար պատասխանատու նշանակված օդանավի անձնակազմի անդամի հետ ստուգում կնիքի և զենքի առկայությունը, որից հետո ստորագրում է արձանագրության օրինակը՝ զենքն ստանալու համար։

23. Օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայության հերթափոխի պետն ուղևորի հետ զենքը և արձանագրության օրինակը ներկայացնում է օդանավակայանի մաքսային հսկողության կետ։ Մաքսային ձևակերպում ստանալուց հետո զենքն արձանագրության օրինակի հետ միասին հանձնվում է ուղևորին։

24. Ժամանման օդանավակայանում ուղևորի կողմից չպահանջված զենքն օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայության աշխատողը պահպանության է հանձնում օդանավակայանի ոստիկանության գծային բաժին՝ արձանագրության օրինակում կատարելով համապատասխան գրառում։

25. Օտարերկրյա օդանավակայանում վայրէջքից հետո զենքի ընդունման համար պատասխանատու նշանակված օդանավի անձնակազմի անդամը զենքը հանձնում է այդ օդանավակայանի պատասխանատու աշխատողին, որն ստորագրում է արձանագրության օրինակը՝ զենքն ստանալու համար։

IV. ԶԵՆՔԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆ ՕԴԱՆԱՎԵՐԻ ԲԵՌՆԱՅԻՆ ԽՑԻԿՆԵՐՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՈՒՂԵԲԵՌ

26. Որպես ուղեբեռ փոխադրման կարող են հանձնվել ակոսափող և ողորկափող որսորդական, ինչպես նաև կարճ ակոսափող հրազենները։

27. Որպես ուղեբեռ զենքը հանձնելու դեպքում օդանավակայանի ուղևորների փոխադրման ծառայության հերթափոխի պետը կամ օդանավ շահագործողի օդանավակայանային ներկայացուցիչն ստուգում է զենքի մաքսային ձևակերպման առկայությունը և զենքի փոխադրման մասին տեղեկացնում օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայությանն ու օդանավակայանի ոստիկանության գծային բաժնին։ Ոստիկանության գծային բաժնի համապատասխան աշխատողն ստուգում է զենքը՝ այդ նպատակով հատկացված սենյակում։

28. Ուղևորը զենքը հանձնում է փաթեթավորված, փամփշտակալից և փամփուշտներից առանձին։ Զենքը և փամփուշտները տեղադրվում են փականով փակվող արկղում։

29. Որպես ուղեբեռ փոխադրման ընդունված զենքը չպետք է գտնվի օդանավի անձնակազմի խցիկում կամ պահպանման հանձնվի օդանավի անձնակազմի անդամներից որևէ մեկին։

30. Որպես ուղեբեռ զենքի փոխադրման դեպքում օդանավ շահագործողի օդանավակայանային ներկայացուցչի կողմից լրացվում է օդանավի բեռնախցիկում զենքի փոխադրման պայմաններին ուղևորին ծանոթացնելու թերթիկ՝ համաձայն N 3 ձևի, չորս օրինակից, որոնցից մեկը մնում է ավիացիոն անվտանգության ծառայությունում, երկրորդը պահվում է տվյալ չվերթի փաստաթղթերի ծրարում, երրորդը տրվում է ուղևորին, իսկ չորրորդը հանձնվում է ոստիկանության գծային բաժին։

V. ԶԵՆՔ ԿՐԵԼԸ ԵՎ ՓՈԽԱԴՐԵԼՆ ՕԴԱՆԱՎԵՐԻ ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ ՍՐԱՀՆԵՐՈՒՄ

31. Թռիչքի ընթացքում օդանավի ուղևորային սրահում կարող են զենք կրել և փոխադրել միայն այն պետական մարմինների և կազմակերպությունների աշխատողները, որոնց դա անհրաժեշտ է իրենց ծառայողական պարտականությունների

կատարման համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 9-ի N 722 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական ռազմականացված կազմակերպություններում մարտական և այլ զենքի, դրանց փամփուշտների ու ռազմամթերքի շրջանառության կարգին համապատասխան։

32. Օդանավի ուղևորային սրահում զենքի փոխադրման դեպքում օդանավ շահագործողի օդանավակայանային ներկայացուցիչն ստուգում է զենքի մաքսային ձևակերպման փաստը։ Ուղևորների նախաթռիչքային զննումից առաջ ուղևորին ծանոթացնում են օդանավի ուղևորային սրահում զենքի փոխադրման կանոններին։ Զենք փոխադրող ուղևորն ստորագրում է օդանավի ուղևորային սրահում զենք փոխադրող անձանց հրահանգավորման թերթիկում՝ համաձայն N 2 ձևի, որը լրացվում է երեք օրինակից, որոնցից մեկը տրվում է օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայությանը, երկրորդը պահվում է տվյալ չվերթի փաստաթղթերի ծրարում, երրորդը տրվում է զենք փոխադրող ուղևորին։

33. Ուղևորների զննման և օդանավ նստեցման գործընթացի անվտանգության ապահովման համար պատասխանատու օդանավակայանի աշխատողները, ինչպես նաև օդանավակայանի տարածքում զինված ծառայություն իրականացնող ծառայություններն օդանավ շահագործողի օդանավակայանային ներկայացուցչի կողմից պարտադիր տեղեկացվում են զինված անձի մասին։

34. Օդանավի հրամանատարը տեղեկացվում է օդանավում զինված անձի գտնվելու և նրա նստատեղի մասին։ Եթե օդանավում գտնվում են մի քանի զինված անձինք, ապա նրանցից յուրաքանչյուրին ևս պետք է տեղեկացվի մյուս զինված անձանց նստատեղերի մասին։

35. Այն դեպքում, եթե զինված անձը տարանցիկ թռիչքի միջանկյալ կետում տեղափոխվում է օդանավից մեկ այլ օդանավ, առաջին օդանավի օդանավ շահագործողը

կամ օդանավի անձնակազմը զինված անձի մասին տեղեկացնում է մյուս օդանավը շահագործողին կամ օդանավի անձնակազմին։

36. Եթե օդանավի ուղևորային սրահում զենք փոխադրող անձի երթուղին նախատեսում է թռիչք այն պետության օդանավով, որի քաղաքացին չէ նա, ապա թռիչքի ընթացքում օդանավի ուղևորային սրահում զենք փոխադրելը նախապես համաձայնեցվում է օդանավ շահագործողի հետ։

37. Թռիչքի ընթացքում արգելվում է օդանավի ուղևորային սրահում զենք փոխադրող անձին ոգելից խմիչքներ մատուցելը։

38. Ուղևորային սրահում զենք փոխադրող անձն օդանավ շահագործողների կողմից տեղեկացվում է այն մասին, որ նա պետք է ձեռնպահ մնա թռիչքի ընթացքում տեղի ունեցած միջադեպերի լուծումից և չմիջամտի դրանց, եթե օդանավի հրամանատարը դրա մասին իրեն չի խնդրել։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N_____

ՕԴԱՆԱՎՈՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՎԱԾ
ԶԵՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Մեկնման օդանավակայան _____ _____ _____ **201 թ.**

Ավիացիոն անվտանգության ծառայության (ԱԱԾ) հերթապահի պետ _____

_____և ոստիկանության զծային
(անունը, ազգանունը, պաշտոնը)

բաժնի _____ զենքը պահելու և կրելու,
(պաշտոնը, անունը, ազգանունը)

զենքը ՀՀ տարածք ներկրելու կամ ՀՀ տարածքից արտահանելու (նշել անհրաժեշտը) թույլտվության համաձայն

_____
(նշել թույլտվության համարը, տալու ժամանակը, ում կողմից է տրված)
_____

չվերթ N _____ բորտ N _____ երթուղի _____

ուղևոր_____
(ազգանունը, անունը, հայրանունը, զենքի տեսակը, համարը, փամփուշտների թիվը)

_____ զենքն ընդունեց ԱԱԾ–ի հերթապահի պետ _____:
(ազգանունը, անունը, հայրանունը, ստորագրությունը)

Զենքը և փաստաթղթերն ստուգեց _____
(ոստիկանության աշխատողի ստորագրությունը,

_____
(անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը)

ԱԱԾ-ի հերթապահի պետ _____:
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ուղևոր _____
(անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, ստորագրությունը)
_____

Անձնակազմի պատասխանատու անդամ _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Զենքը տեղադրված է մետաղյա արկղում և կնքված է կնիքով _____:
(նշել կնիքի համարանիշը)

2. Ժամանման օդանավակայան _____

ԱԱԾ-ի հերթապահի պետ _____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

N_____ արձանագրությամբ՝ անձնակազմի պատասխանատու անդամ_____ - ից

(անունը, ազգանունը)

ընդունեցի զենքը, փամփուշտները _____
(նշել զենքի մոդելը, ձևը, տեսակը, համարը, փամփուշտների թիվը)

ԱԱԾ-ի հերթափոխի պետ _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

3. Տրված է ուղևորին _____ չվերթ N _____
(անունը, ազգանունը, անձնագրային տվյալները)

_____
(զենքի տեսակը, համարը, փամփուշտների թիվը)

ԱԱԾ-ի հերթափոխի պետ _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ուղևոր _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____ _____ 201 թ.

Ձև N 2

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ՝

ՕԴԱՆԱՎԵՐԻ ՈՒՂԵՎՈՐԱՅԻՆ ՍՐԱՀՆԵՐՈՒՄ ԶԵՆՔ
ՓՈԽԱԴՐՈՂ ԱՆՁԱՆՑ

_____ _____
(ուղևորի անունը, ազգանունը, հայրանունը) (թույլատրող մարմնի անվանումը)

Չվերթի համարը _____, երթուղին _____, նստատեղ _____ (ընդգծել հարկավորը)

- ☐ Իրավապահ մարմինների զինված աշխատող
- ☐ Զենք կրող (զինված) անձ
- ☐ Զինված ուղեկցող

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՆՍՏԵՑՄԱՆ ԵՎ ԹՌԻՉՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ՝

1. Եթե Ձեզ թույլատրված է օդանավի ուղևորասրահներում կրել զենք, ապա խնդրում ենք թռիչքի ամբողջ ընթացքում այն պահել այլ ուղևորներից քողարկված և անտեսանելի։

2. Օդանավի հրամանատարը, բորտուղեկցորդը և օդանավում գտնվող մյուս զինած ուղևորները (եթե այդպիսիք կան) պետք է տեղեկացված լինեն Ձեր զինված լինելու փաստի մասին։

3. Օդանավի օդաչուները և բորտուղեկցորդները գիտեն ինչպես գործել ուղևորների միջև անկարգությունների առաջացման ժամանակ՝ առանց այլ ուղևորներից օգնություն հայցելու, ուստի, չեն ակնկալում Ձեր օգնությունը։ Օդանավում հրազենից արձակված կրակոցից առաջացած հետևանքները կարող են լինել ավելի ծանր, քան ուղևորների միջև անկարգությունները, այդ թվում՝ օդանավի զավթման դեպքերում։ Օդաչուներին պատահաբար շարքից հանելու դեպքում թռիչքը կարող է հանգեցնել աղետի, օդանավի կողային վահանակների, հետևի, հատակի ներքևի և առաստաղի վերևի մասերով անցնում են բազմաթիվ էլեկտրասնուցման և ղեկավարման մալուխներ, վառելիքի և հիդրավլիկայի խողովակաշարեր, որոնք կարևոր նշանակություն ունեն թռիչքի անվտանգության համար, և կարող են վնասվել հրազենից պատահաբար արձակված ուղիղ կամ հետդարձված գնդակից։

4. Զենք կրող անձանց՝ օդանավում չեն կարող մատուցվել ալկոհոլային խմիչքներ։

5. Եթե Դուք ուղեկցում եք կալանավորի՝

1) Դուք պետք է նաև ունենաք գործողությունները սահմանափակող հատուկ միջոցներ, որոնք հարկ եղած դեպքում անհրաժեշտ կլինի կիրառել կալանավորի գործողությունները վերահսկելու, ինչպես նաև շրջապատող անձանց անվտանգությունն ապահովելու համար.

2) Դուք պետք է օդանավ նստեք մնացած ուղևորներից առաջ։ Ձեզ պետք է հատկացվեն նստատեղեր օդանավի ուղևորասրահի հետին մասում (վերջնամասում)։ Ձեր նստատեղը պետք է գտնվի կալանավորի նստատեղի և միջանցքի արանքում.

3) Դուք պետք է ուղեկցեք կալանավորին նաև զուգարանից օգտվելու ժամանակ.

4) օդանավի վայրէջքից հետո Դուք պետք է մնաք ձեր տեղերում մինչև վերջին ուղևորի՝ օդանավը լքելը.

5) Ձեզ և Ձեր կողմից ուղեկցվող կալանավորին արգելվում է օգտագործել ալկոհոլային խմիչքներ։

ՁԵՐ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆ ՁԵԶ ՄՈՏ ԶԵՆՔ ԿՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ՝ ԱՅՆ ՓԱՍՏԸ, ՈՐ ԴՈՒՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՔ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____

_____ ՊԱՀԱՆՋՈՎ։
(կազմակերպության անվանումը)

Ուղևոր _____ _____
(ստորագրությունը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____ 201 թ.

Ավիաընկերության ներկայացուցիչ _____ _____
(ստորագրությունը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____ 201 թ.

10_0843

Լրացուցիչ՝ Ավիաընկերության ներկայացուցիչը լրացված և ստորագրված փաստաթղթի առաջին օրինակը տաիս է օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայությանը, երկրորդ օրինակը տեղադրում է չվերթի փաստաթղթերի ծրարում, երրորդ օրինակը հանձնում է ուղևորին։

Բորտուղեկցորդը հավաքում է նստեցման կտրոնին կցված՝ լրացված և ստորագրված փաստաթղթերի օրինակները, ծանուցում օդանավի հրամանատարին և, առանց ավելորդ ուշադրություն գրավելու, օդանավում գտնվող զինված անձանց տեղեկացնում միմյանց գտնվելու տեղերի մասին։

Ձև N 3

ՕԴԱՆԱՎԻ ԲԵՌՆԱԽՑԻԿՈՒՄ ՓՈԽԱԴՐՎՈՂ ԶԵՆՔԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՈՒՂԵՎՈՐԻՆ ԾԱՆՈԹԱՑՆԵԼՈՒ ԹԵՐԹԻԿ

Ձեզ թույլատրվում է փոխադրել Ձեզ պատկանող զենքն օդանավի բեռնախցիկում գտնվող հաշվառված ուղեբեռով՝ պայմանով, որ՝

1) օդանավ շահագործողն իրազեկված է փոխադրվող զենքի մասին.

2) զենքը գտնվում է պարպված (չլիցքավորված) և փամփուշտներից առանձին փաթեթավորված վիճակում.

3) օդանավի թռիչքի ընթացքում ուղևորների համար բեռնախցիկում փոխադրվող ուղեբեռները (զենքը) անհասանելի են.

4) ոչ մեծ քանակությամբ զինամթերք կարող է փոխադրման ընդունվել միայն վտանգավոր բեռների համար նախատեսված համապատասխան փաթեթավորումից հետո:

Զենքն ստուգված և փաթեթավորված է՝

Ոստիկանության ներկայացուցիչ _____ _____
(կոչումը, պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը) (ստորագրությունը)

_____ _____ 201 թ.

Ծանոթանալով զենքի փոխադրման պայմաններին՝ օդանավ շահագործողին խնդրում եմ ապահովել

_____ փոխադրումը՝
(նշել զենքի տեսակը, զինամթերքի քանակը)

_____չվերթով:

Ուղևոր _____ _____
(ստորագրությունը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____ 201 թ.

Ավիաընկերության
ներկայացուցիչ _____ _____
(ստորագրությունը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____ 201 թ.

10_0843

Լրացուցիչ՝ Օդանավի բեռնախցիկում փոխադրվող զենքի փոխադրման պայմաններին ուղևորին ծանոթացնելու թերթիկի առաջին օրինակը տրվում է օդանավակայանի ավիացիոն անվտանգության ծառայությանը, երկրորդ օրինակը պահվում է տվյալ չվերթի փաստաթղթերի ծրարում, երրորդ օրինակը տրվում է ուղևորին, չորրորդ օրինակը՝ ոստիկանությանը։